Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2021թ. ապրիլի 17-ի թիվ 4 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«17» 04. 2021թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություններով)

I.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը ՀՀ օրենսդրության և Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) կանոնադրության հիման վրա սահմանում է ֆակուլտետի կարգավիճակը սկզբունքներն ու կարգը:
2. Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:
3. Ֆակուլտետի կանոնադրությունը ռեկտորի ներկայացմամբ հաստատում է ԳՊՀ գիտական խորհուրդը:
4. Ֆակուլտետի կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:

II. Ֆակուլտետի անվանումը և հասցեն

5. Ֆակուլտետի պաշտոնական լրիվ անվանումն է՝
հայերեն՝ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի _____ ֆակուլտետ
ռուսերեն՝_____факультет_____фонд „Гаварского государственного университета”
անգլերեն՝_____Faculty of foundation „Gavar State University”

III. Ֆակուլտետի կարգավիճակը

6. Ֆակուլտետը ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանում է՝ օժտված համապատասխան իրավունքներով և պարտականություններով: ԳՊՀ ֆակուլտետը չունի իրավաբանական անձի կարգավիճակ:
7. Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, ԳՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությամբ, ինչպես նաև ԳՊՀ և ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության սահմաններում ընդունած իրավական ակտերով:
8. Ֆակուլտետն ունի ձևաթուղթ /բլանկ/ և խորհրդանիշ:

IV. Ֆակուլտետի խնդիրները

9. Ֆակուլտետը ԳՊՀ ուսումնական, գիտական և վարչական ստորաբաժանում է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթական ծրագրեր մեկ կամ մի քանի մասնագիտություններով:

10.Ֆակուլտետը համակարգում է ամբիոնների գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքները:

V. **Ֆակուլտետի ինքնուրույնությունը**

11. Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը, ԳՊՀ և ֆակուլտետի կանոնադրու-թյուններին:

12. Ելնելով իր կողմից իրականացվող ուսումնական, մեթոդական, գիտական, ուսումնաօժանդակ և տեխնիկական աշխատանքներից՝ ֆակուլտետն ըստ սահմանված չափանիշների մշակում է իր հաստիքացուցակը, որը ռեկտորի կողմից ներկայացվում է հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

13. ԳՊՀ-ն ֆակուլտետին տրամադրում է անհրաժեշտ գույք՝ օգտագործման իրավունքով:

VI. **Ֆակուլտետի կառուցվածքը և կառավարումը**

14.Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից և ուսումնաօժանդակ այլ միավորներից:

15.Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ԳՊՀ և ֆակուլտետի կանոնադրություններին համապատասխան:

16.Ֆակուլտետի կառավարումը հիմնված է միաձնյա և կոլեկտիվ կառավարման զուգակցման, կարևոր հարցերի լուծմանը ֆակուլտետի կոլեկտիվի մասնակցության սկզբունքների վրա:

17.Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և դեկանը:

VII. **Ֆակուլտետի խորհրդի խնդիրները և կազմավորման կարգը**

18. Ֆակուլտետի խորհուրդը իր իրավասության շրջանակներում քննարկում և լուծում է ֆակուլտետի կրթական, ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերը:

19. Ֆակուլտետի խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են դեկանը՝ որպես նախագահ, նրա տեղակալը, ֆակուլտետի ամբիոնների վարիչները, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահները:

20. Ֆակուլտետի խորհրդի մնացած անդամները համամասնորեն ընտրվում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից: Ֆակուլտետի խորհրդի ընտրովի անդամների քանակը կազմում է ֆակուլտետի խորհրդի անդամների 50 տոկոսը:

21. Ֆակուլտետի խորհրդի կազմում կարող են ընդգրկվել ֆակուլտետի գործունեության հետ կապված մասնագետներ՝ խորհրդի կազմի միչև 20 տոկոսի չափով:

22. Ֆակուլտետի դեկանի ընտրությունից հետո մեկամսյա ժամկետում խորհրդի անդամների կազմը դեկանի ներկայացմամբ հաստատում է ԳՊՀ ռեկտորը՝ 5 տարի ժամկետով:

23. Ֆակուլտետի խորհրդի քարտուղարին դեկանի ներկայացմամբ նշանակում է ԳՊՀ ռեկտորը:

VIII. **Ֆակուլտետի խորհրդի իրավասությունները**

24.Ֆակուլտետի խորհուրդն ունի հետևյալ իրավասությունները.

1) համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում դեկանի, ամբիոնների

վարիչների պաշտոնների թեկնածություններ՝ ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչների ընտրության կարգերին համապատասխան, ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ առաջարկություն է ներկայացնում Համալսարանի ռեկտորին.

2) առաջադրում է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդում և գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչներին.

3) առաջադրում է Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի անդամների թեկնածությունները.

4) ձևավորում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի կազմը.

5) Համալսարանի ռեկտորին և գիտական խորհրդին առաջարկություններ է ներկայացնում ֆակուլտետի ամբիոններ, լաբորատորիաներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու և վերակազմակերպելու վերաբերյալ, որը ներկայացվում է հոգաբարձուների խորհրդի հաստատմանը,

6) լուծում է ֆակուլտետի ուսումնական, մեթոդական և գիտական աշխատանքների, ինչպես նաև միջազգային կապերի և գործունեության այլ ոլորտներին վերաբերող հարցերը,

7) Համալսարանի ռեկտորին, ուսումնագիտական գծով պրոռեկտորին, ինչպես նաև ակադեմիական քաղաքականության բաժին է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները,

8) ԳՊՀ գիտական խորհրդին առաջարկություն է ներկայացնում ֆակուլտետի աշխատողին պատվավոր կոչումներ շնորհելու նպատակով,

9) քննարկում է ֆակուլտետի ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվու-թյունները,

10) քննարկում է ֆակուլտետի կիսամյակային և տարեկան քննաշրջանների արդյունքները,

11)քննարկում և երաշխավորում է մագիստրատուրա և ասպիրանտուրա ընդունվողների թեկնածությունները, հաստատում է ասպիրանտների անհատական պլանները, ինչպես նաև ասպիրանտների տարեկան ատեստացիայի արդյունքները (առկայության դեպում),

12) լսում է ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների, դրամաշնորհների, գործու-ղումների վերաբերյալ հաշվետվությունները,

13) քննարկում է ֆակուլտետի ամբիոնների որոշումների դեմ ամբիոնի անդամների բողոքները,

14) ամփոփում է ուսանողների ուսումնական, նախաավարտական, հետազոտական պրակտիկաների արդյունքները,

15) մշակում և իրականացնում է միջոցառումներ ֆակուլտետի ուսանողների կրթության որակը բարձրացնելու ուղղությամբ,

16) իրականացնում է ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված՝ Համալսարանի կանոնադրությունից բխող այլ իրավասություններ:

IX. **Ֆակուլտետի խորհրդի աշխատակարգը**

25. Ֆակուլտետի խորհրդի նիստերը ըստ անհրաժեշտության հրավիրում է դեկանը կամ խորհրդի անդամների մեծամասնությունը:

26. Ֆակուլտետի խորհրդի նիստերն իրավազոր են նրա ցուցակային կազմի ձայների պարզ մեծամասնության ներկայության դեպքում:

27. Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են նիստերին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե խորհուրդը քվեարկության այլ կարգ չի սահմանում:

28. Ֆակուլտետի խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նիստը հրավիրում է դեկանի պաշտոնակատարը:

29. Ֆակուլտետի խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել համալսարանի ռեկտորը կամ նրա ներկայացուցիչը, ինչպես նաև հրավիրված անձինք:

30. Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի ամբիոնների, աշխատողների, ուսանողների և ասպիրանտների համար:

31. Ֆակուլտետի խորհրդի նախագահը կազմակերպում է խորհրդի որոշումների կատարման պարբերական ստուգումներ և անհրաժեշտության դեպքում խորհրդին տեղյակ է պահում դրանց կատարման մասին:

32. Ֆակուլտետի խորհրդի նիստերն արձանագրվում են, որոնք ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:

X. **Ֆակուլտետի դեկանը**

33. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է ֆակուլտետի դեկանը՝ իր իրավասությունների սահմաններում և ԳՊՀ կանոնադրության համաձայն:

34. Ֆակուլտետի դեկանը կարող է ունենալ տեղակալ (տեղակալներ), որին (որոնց) դեկանի ներկայացմամբ նշանակում է ԳՊՀ ռեկտորը:

35. Ֆակուլտետի դեկանն ընտրվում է ԳՊՀ գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով:

36. Ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրված է համարվում ԳՊՀ գիտական խորհրդում ամենաշատ ձայներ, բայց ոչ պակաս, քան մասնակիցների ձայների կեսից ավելին հավաքած թեկնածուն: Դեկանի ընտրությանը նվիրված ԳՊՀ գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների երկու երրորդը:

37. Դեկանին պաշտոնի է նշանակում և նրա հետ աշխատանքային պայմանագիր կնքում ԳՊՀ ռեկտորը՝ ընտրությունների արդյունքների հիման վրա:

38. Ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար թեկնածուների առաջադրումը, ընտրությունների անցկացումը, դեկանի հետ աշխատանքային պայմանագրի կնքումը և պաշտոնում հրամանագրումը կատարվում է սահմանված կարգով:

XI. **Ֆակուլտետի դեկանի լիազորությունները**

39. Ֆակուլտետի դեկանն իր պաշտոնում իրավազոր է մինչև նոր դեկանի հրամանագրումը:

40. Ֆակուլտետի դեկանը՝

1) ղեկավարում է ֆակուլտետի գործունեությունը կրթական, գիտական, արտաքին կապերի և այլ ոլորներում.

2) ապահովում է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի որոշումների, ԳՊՀ ռեկտորի հրամանների, ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը.
3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալի (տեղակալների), ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունները.
4) սահմանված կարգով ԳՊՀ ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու, ինչպես նաև ֆակուլտետից ֆակուլտետ տեղափոխության վերաբերյալ.
5) ղեկավարում և վերահսկում է ֆակուլտետի ուսումնական գործընթացը.
6) ղեկավարում է ուսումնական պարապմունքների դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց կատարումը.
7) վերահսկում է ստուգարքների և քննությունների անցկացման գործընթացը.
8) առաջարկություններ է ներկայացնում ֆակուլտետի աշխատակիցներին և ուսանողներին խրախուսելու, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.
9) պատասխանատվություն է կրում ֆակուլտետին հատկացված գույքի, նյութական միջոցների պատշաճ օգտագործման համար.
10) կազմակերպում և անցկացնում է ֆակուլտետի խորհրդի, դեկանատի նիստեր, միջամբիոնային խորհրդակցություններ, գիտական և գիտամեթոդական խորհրդակցություններ և սեմինարներ.
11) լուծում է Համալսարանի կանոնադրությունից բխող և ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ խնդիրներ:
12) Կիսամյակային և տարեկան գործողությունների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ֆակուլտետի խորհրդին և Համալսարանի գիտական խորհրդին:
13) Ֆակուլտետի դեկանի հանձնարարությունները և հրահանգները պարտադիր են ֆակուլտետի բոլոր աշխատակիցների և ուսանողների համար:

XII. **Ֆակուլտետի դեկանատը**

41. Ֆակուլտետի գործունեության ընթացիկ հարցերի լուծման համար ֆակուլտետում գործում է կազմակերպական մարմին՝ դեկանատ, որի կազմում են դեկանը, նրա տեղակալը (տեղակալները), ամբիոնների վարիչները, ֆակուլտետի խորհրդի քարտուղարը, ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը:
42. Ֆակուլտետի դեկանատի գործունեությունը ղեկավարում է դեկանը:

XIII. **Ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդը**

43. Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման համար ֆակուլտետում գործում է խորհրդակցական մարմին՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդ՝ կազմված նախագահից և անդամներից, որոնք ընտրվում են ֆակուլտետի խորհրդում՝ ամբիոնների առաջարկությամբ և հաստատվում ռեկտորի հրամանով:
44. Ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդը հարցերը (կրթական ծրագրեր, ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և այլն) քննարկում է դեկանի առաջարկով կամ ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:

XIV. **Ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները**

45. Ֆակուլտետի ամբիոնները ուսումնագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են:

46. Ֆակուլտետի ամբիոնների խնդիրներն են՝ կազմակերպել ուսումնական գործընթացը, իրականացնել մեթոդական և գիտական հետազոտություններ, գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման աշխատանքներ:

47. Ֆակուլտետի ամբիոնները գործում են ԳՊՀ և ֆակուլտետի կանոնադրությունների, ԳՊՀ ամբիոնի կանոնակարգի համաձայն:

48. Ֆակուլտետի ամբիոնների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումն ընդունում է ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը:

49. Ֆակուլտետի ամբիոնի վարիչը կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները, ամբիոնը ներկայացնում է Համալսարանի, ֆակուլտետի, համալսարանական ստորաբաժանումների, ինչպես նաև ոչ համալսարանական կազմակերպությունների հետ հարաբերություններում:

50. Ֆակուլտետի ամբիոնի վարիչը մրցութային հիմունքներով 5 տարի ժամկետով ընտրվում է ԳՊՀ գիտական խորհրդում փակ, գաղտնի քվեարկությամբ, որից հետո հրամանագրվում է ռեկտորի կողմից, և նրա հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր:

51. Ֆակուլտետի ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ամբիոնի վարիչը սահմանված կարգի համաձայն տարին մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում ֆակուլտետի խորհրդին և Համալսարանի գիտական խորհրդին:

52. Ամբիոնի վարիչի գործունեությունը ֆակուլտետի խորհրդում բացասական գնահատականի արժանանալու դեպքում հրավիրվում է խորհրդի արտահերթ նիստ, որի քննարկմանն է դրվում ամբիոնի վարիչին հետ կանչելու հարցը: Փակ, գաղտնի քվեարկությամբ՝ խորհրդի կազմի ձայների մեծամասնությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշում կայացնելու դեպքում խորհուրդը միջնորդում է ԳՊՀ գիտական խորհրդին՝ հաստատելու ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը:

53. ԳՊՀ գիտական խորհրդում փակ, գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը:

54. Ֆակուլտետի ամբիոնի կազմում ընդգրկվում են պրոֆեսորներ, դոցենտներ, ասիստենտներ և դասախոսներ: Ամբիոնի մաս են կազմում նաև ասպիրանտները և ուսումնաօժանդակ անձնակազմը:

55. ԳՊՀ կանոնադրությանը համապատասխան՝ սահմանված կարգով իրականացվում են ամբիոնների պրոֆեսորադասախոսական և գիտական կազմի պաշտոնատեղերի ստեղծման, տեղակալման, առաջխաղացման, վերահրամանագրման գործընթացները:

56. Ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, կազմի և ԳՊՀ-ի միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են պայմանագրային հիմունքներով, որոնց նախորդում է պաշտոնի հավակնորդի ընտրության մրցութային կարգը (բացառությամբ մանկավարժական հատուկ տարակարգեր զբաղեցնելու դեպքերի):

57. Ֆակուլտետի ամբիոնների աշխատանքներն իրականացվում են ամբիոնների աշխատանքային ծրագրերին համապատասխան և ընդգրկում են ուսումնական, գիտամեթոդական, գիտահետազոտական և բուհական աշխատանքների այլ տեսակներ:

58. Ամբիոնի գործունեության հարցերը քննարկվում են ամբիոնի վարիչի հրավիրած ամբիոնի նիստերում, որոնք հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ:

Ասպիրանտները, ուսումնաօժանդակ կազմը և այլ անձինք ամբիոնի նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

59. Ամբիոնի աշխատանքները պետք է արտացոլվեն համապատասխան փաստաթղթերում՝ ԳՊՀ գործավարության կանոնների համաձայն:

60. Ֆակուլտետի լաբորատորիաները ֆակուլտետի գիտաուսումնական ստորաբաժանումներն են:

61. Ֆակուլտետի լաբորատորիաների կազմակերպումը և գործունեությունը իրականացվում են ԳՊՀ ամբիոնների համար սահմանված կանոններին համապատասխան:

62. Ֆակուլտետի լաբորատորիաների խնդիրներն են՝ նպաստել գիտահետազոտական աշխատանքների կատարմանը և ֆակուլտետի ուսումնական գործընթացին:

63. Ֆակուլտետի լաբորանտի աշխատանքները ղեկավարում է լաբորատորիայի վարիչը:

64. Ֆակուլտետի լաբորատորիան կարող է ունենալ գիտական և օժանդակ աշխատողներ:

65. Ֆակուլտետի լաբորատորիաների գործունեության հիմնական հարցերը քննարկվում են ֆակուլտետի խորհրդի նիստերում:

66. Ֆակուլտետի լաբորատորիայի ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումն ընդունում է ԳՊՀ գիտական խորհուրդը՝ ֆակուլտետի խորհրդի առաջարկությամբ: